

«Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/5

10 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ բողոքը ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշման դեմ:

«Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ բողոքում բերված փաստարկները.

18.09.2014 թ-ին ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին ներկայացվել է բողոք՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ակտը և կայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.04.2014թ թիվ 1010339 հանձնարարագրով ստուգումը կասեցնելու որոշում:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը, 14.10.2014 թ-ի թիվ 22/3 որոշմամբ որոշել է «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ 18.09.2014 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ հաշվի առնելով, որ ստուգման ակտի կազմման համար հիմք հանդիսացող ապացույցը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 03.07.2014 թ-ի ակտը, վիճարկվում է դատական կարգով:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի որոշման մասին 05.11.2014 թ-ին տեղեկացվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետին, միաժամանակ խնդրելով կասեցնել հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վարույթը՝ Որոշում թիվ 131, ինչպես նաև վերացնել ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ի կողմից 30.04.2014 թ-ի «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 028505 բռնագանձման որոշումը և հանել կիրառված արգելանքները: Սակայն, ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետին ուղղված գրությունը մինչ օրս մնացել է անպատասխան: Ավելին, ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱԿԿ ծառայությանը 22.12.2014 թ-ին ներկայացվել է թիվ 131 որոշումն ընկերության գույքի վրա արգելանք դնելու համար:

Ընկերությունը կարծում է, որ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումն անվավեր է և ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Քննարկվող դեպքում «Արգավանդի Տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ն բազմիցս տեղեկացրել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ին, որ ստուգման ակտի կազմման համար հիմք հանդիսացող ապացույցը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 03.07.2014 թ-ի ակտը, վիճարկվում է դատական կարգով, սակայն այս հանգամանքը վարչական մարմնի կողմից անտեսվել է, ինչը օրենքի կոպիտ խախտում է: Վարչական ակտի վիճարկման հանգամանքը վարչական վարույթի կասեցման միանշանակ հիմք է: Հետևապես ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ն պարտավոր էր կասեցնել վարչական վարույթը և

վարչական ակտի վիճարկման փաստի մասին տեղյակ լինելով իրավունք չունենալու կայացնել որոշում հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին:

Քննարկվող դեպքում ակնհայտ է, որ վարչական մարմնի կողմից խախտվել է վարչարարության օրինականության սկզբունքը, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հանգեցնում է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ի թիվ 131 որոշման անվավերությանը:

Վարչական մարմնի կողմից խախտվել է նաև նշված օրենքի 71-րդ հոդվածի պահանջները:

Փոստային ծառայության միջոցով 24.09.2014 թ-ին ստացվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի թիվ 131 որոշումը, որի 5-րդ կետի համաձայն այն կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից 6-ամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

Քննարկվող դեպքում թիվ 131 որոշման 5-րդ կետի համաձայն, վարչական ակտի բողոքարկման համար սահմանված է 6-ամսյա ժամկետ, իսկ նույն որոշման 2-րդ կետի համաձայն որոշումն սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ԴԱԿԿ ծառայություն, սակայն վարչական մարմինը վարչական ակտի անբողոքարկելի դառնալու ժամկետից շուտ՝ 22.12.2014 թ-ին, թիվ 131 որոշումը ներկայացվել է ՀՀ ԱՆ ԴԱԿԿ ծառայություն: Այսինքն, վարչական մարմինն ընկերությանը զրկել է օրենքով սահմանված կարգով վարչական ակտի բողոքարկման իրավունքից:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ի պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.04.2014 թ-ի թիվ 1010339 հանձնարարագրի համաձայն «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 48.580.721 դրամ:

«Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 18.09.2014 թ-ին Ակտի դեմ ՀՀ ֆինանսների նախարարություն բերվել է գանգատ: Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ակտով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմք է հանդիսացել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 03.07.2014 թ-ի ակտը, որը վիճարկվում է դատական կարգով, 14.10.2014 թ-ին ընդունել է թիվ 22/3 որոշումը, որի համաձայն 18.09.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Հանձնաժողովի 22/3 որոշումը ստանալուց հետո ընկերությունը գրությամբ դիմել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետին՝ խնդրելով կասեցնել ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշման (այսուհետ նաև Որոշում) կատարումը, հաշվի առնելով,

որ Որոշմամբ գանձման առաջադրված գումարի գերակշիռ մասն առաջադրվել է Ակտով, որի դեմ բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը Հանձնաժողովի թիվ 22/3 որոշմամբ կասեցվել է: Սակայն հաշվի չառնելով ընկերության գրությամբ բերված միջնորդությունը, այն ուղարկվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ կատարման:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Հանձնաժողովի 22/3 որոշումը կայացվելու և ընկերության կողմից գրությամբ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ միջնորդություն ներկայացվելու պայմաններում վերջինիս կողմից Որոշումը չպետք է ուղարկվեր կատարման, քանի որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության գերակշիռ մասը առաջադրվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտով, որի դեմ ընկերության կողմից բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը գտնվում է կասեցման փուլում: Մասնավորապես, Որոշմամբ գանձման առաջադրված գումարը կազմում է 48.768.310 դրամ, որից 48.580.721 դրամն առաջադրվել է Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի երրորդ պարբերության համաձայն. «Սույն օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան, սահմանում է նաև հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի դրույթներով՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ին անհրաժեշտ է դիմում ներկայացնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ Որոշումը վերադարձնելու մասին: Միաժամանակ Եղեգնաձորի ՏՀՏ-ին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ Որոշման կատարմանն ուղղված գործողություններից, մինչև ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտի դեմ ընկերության բերված բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումը թողնել անփոփոխ:

2. ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ին.

դիմում ներկայացնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումը վերադարձնելու մասին:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ